ԿԱՐԾԻՔ

Արեգ Արմանի Վարդանյանի «Քաղաքական գաղափարները Հայաստանում (XI դարի երկրորդ կեսից – XIII դար)». ատենախոսության մասին

Միջնադարյան Հայաստանի պատմության քաղաքական գաղափարների վերլուծությունը մատենագրական սկզբնաղբյուրների հիմքի վրա, որին ձեռնամուխ է եղել Արեգ Վարդանյանը, բարդ և աշխատատար խնդիր է: Նա ընդհանուր հայացք նետելով ողջ հայկական միջնադարի վրա, վերստին քննության է ենթարկում ԺԱ-ԺԳ դարերի քաղաքական մտածողության առանձնահատկությունները: Ելնելով քննարկվող խնդիրների կարևորությունից, հեղինակն ընթերցողի ուշադրությունն է հրավիրում պետությունների քաղաքատնտեսական կառուցվածքի և տիրապետող քաղաքական մշակույթների վրա, որոնք կարևոր տեղ են զբաղեցնում աշխատանքում և արդիական շունչ են հաղորդում հետազոտությանը: Հեղինակը փորձել է պատմության խորքային ըմբռնման համար ուսումնասիրել պետականության անկման և վերականգնման գաղափարական որոշ սկզբունքներ, որոնք իրապես կարող են լույս սփռել թե Հայաստանի, այնպես էլ Մերձավոր Արևելքի միջնադարի պատմության մի շարք պետականաշինական խնդիրների վրա: Աշխատանքի մեթոդաբանությունը հստակեցնելու համար ատենախոսը դիմել է ժամանակակից անգլիական գրականության, ինչպես նաև մի շարք համաշխարհային պատմագիտական դպրոցների մշակած սկզբունքներին, սակայն իր աշխատանքը հիմնականում կառուցել է հայագիտության աղբյուրագիտական հենքի և օգտագործած մեթոդների վրա: Հեղինակի տեսադաշտում է Թ-ԺԴ դարերի գրեթե ողջ հայկական մատենագրական ժառանգությունը և բազմալեզու հետազոտությունների ֆոնդը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, եզրակացությունից, ԲՈԿ-ի ցուցումներով կազմված սկզբնաղբյուրների և գրականության ցանկերից, ուր աշխատությունների և հոդվածների են բաժանված հետազոտությունները:

Առաջին գլխում հեղինակն անդրադարձել է քաղաքական գաղափարների զարգացման պատմահասարակական միջավայրին և մատենագրական դրսևորումներին, իրար հետ համեմատելով Ե-Թ և ԺԱ դարերում տեղի ունեցած հայկական պետականության անկման պրոցեսները, առանձնացնելով հայկական ավատատիրության թույլ կողմերը (տոհմային մտածողության գերակայությունը, մշտական բանակի, սեփական դրամի և կենտրոնացված պաշտոնեության բացակայությունը): Թեպետ երկու դարաշրջանում էլ կարևոր դեր են կատարել իրար դեմ պայքարող կայսրությունները, ատենախոսն առաջին դեպքում տեսնում է միայն թագավորական իշխանության վերացում, իսկ երկրորդում՝ հասարակության բոլոր շերտերի և հաստատությունների համապարփակ քայքայում, որի հետևանքով վերացել է ոչ միայն թագավորական իշխանությունը, այլ ի տարբերություն Ե դարից անկում են ապրել կամ ոչնչացել են նախարարական տների մեծ մասը, մի շարք կենտրոնների ստեղծումով, երկատվել է կաթողիկոսական իշխանությունը: Երևույթներ, որոնք տրամաբանորեն բխել են հայկական վերնախավի պետական մտածողության կենտրոնախույս ձգտումներից, ինչն էլ արտահայտված է Բագրատունյաց դարաշրջանի պատմագիրների

գաղափարական կողմնորոշումներում (էջ 24)։ Ատենախոսն իրավացիորեն Մովսես Խորենացուն համարելով Հայոց կենտրոնական պետության գաղափարախոսը, ցույց է տալիս, որ նրա պատկերած պետական համակարգից շատ հեռու է Բագրատունյաց պետությունը, որը պատմահոր նկարագրած պետության հակոտնյան է։ Ի տարբերություն Բագրատունիների, ատենախոսն հակառակ երևույթն է նկատում Վրաց թագավորությունում, ուր կառավարող իշխանական տները ԺԱ դ. հետո ավելի են համախմբվել թագավորական իշխանության շուրջ։ Ատենախոսը Ժ-ԺԱ դդ. պետական իշխանության շուրջ համախմբման տարբեր է նկատում միայն Կյուրիկյան թագավորության պատմության ընթացքում, նկատի ունենալով Բագրատունիների այդ ճյուղի կողմից տարածքների որոշակի համախմբումը, նպատակասլաց բեր-դաշինությունը, Աղվանից թագավորի տիտղոսի սեփականումը[1], այդ երկրամասի կաթողիկոսական իշխանության հետ համագործակցությունը համահայկական խնդիրներում, ինչպես նաև դրամի թողարկման կարևորության ընկալումը։ Այնուամենայնիվ, ատենախոսն իրավացիորեն ընդգծում է, որ Կյուրիկյաններն էլ չկարողացան մրցակցել Վրաց թագավորության հետ։ Հեղինակն անդրադառնում է նաև Ժ դարից սկսած հայ-բյուզանդական դավանաբանական և եկեղեցաքաղաքական հակամարտության արտահայտման ձևերին, ցույց տալով, որ Բագրատունյաց դարաշրջանի գաղափարախոսական պայքարի դարբնոցներ են դառնում վանք-վարդապետանոցները, որին զուգահեռ բարգավաճում էր քաղաքային բնակչությունը և ձևավորվող վաճառականական դասը։ Ժ-ԺԱ դարերի ընթացքում Բյուզանդական կայսրության անթաքույց նպատակներից է դառնում կաթողիկոսական իշխանության և Հայոց պետականության վերացումը։ Պետականության անկմանն հաջորդում է նախ Հայոց կաթողիկոսության դուրսբերումը հայրենիքի սահմաններից, որին հետևում է հոգևոր իշխանության կենտրոնների մասնատում և միմեանց հակադրում, որն, ըստ հեղինակի, խոսում է Հայոց եկեղեցին կառավարող ինստիտուտների լուրջ ճգնաժամի մասին։ Իմ կարծիքով, դրան հակադրվելու փորձ կարելի է համարել ԺԱ-ԺԲ դդ. Հայոց եկեղեցու նվիրապետական համակարգի տարածքային ընդարձակումը, որը սերտորեն կապված էր դեպի Մերձավոր Արևելքի տարբեր շրջաններ Հայոց ազգաբնակչության արտագաղթի հետ, որով էլ ավելի են սրվում փոխհարաբերությունները ոչ միայն բյուզանդական, այլ նաև վրացական, հակոբիկ-ասորական և կաթոլիկ եկեղեցիների հետ։ Գլխի կարևորագույն մասերից է հեղինակի անդրադարձը Բագրատունյաց թագավորության անկման մասին պատմող սկզբնաղբյուրներին, որի ընթացքում հեղինակը պարզում է, որ այդ իրադարձությանն անդրադարձած պատմիչներին կարելի է բաժանել առնվազն երկու հակադիր բանակների. բյուզանդական իշխանության հաստատմանը կողմ և դեմ հեղինակների։ Քաղաքական այս հոսանքները հստակորեն երևում են նաև հետագա իրադարձություններում, երբ Կիլիկիայում Ռուբինյանները փորձում են հնարավորինս շուտ ազատվել Բյուզանդական տիրապետությունից, իսկ

[1] Տեղին է ծանոթագրություններից մեկում (119) Արեգ Վարդանյանի անդրադարձը Հայոց և Աղվանից մշակութային փոխհարաբերությունների աղավաղման որոշակի տենդենցին։

Օշինյանները հակադրվելով դրան, առաջարկում էին իրենց «անշահախնդիր» հնազանդությունը կայսրությանը (տե՛ս Ա. Բոզոյան, Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը. . . , էջ 225-227):

Հաջորդիվ, ատենախոսը փորձում է քննել ԺԱ դ. ճգնաժամն հաղթահարելու տեսլականները: Նա կարևոր հանգամանք է համարում այն, որ Բագրատունյաց թագավորության անկումից հետո հայկական զինվորական ջոկատները չեն զինաթափվել և շարունակել են իրենց ծառայությունները մատուցել տարածաշրջանի միապետներին, իսկ Կյուրիկյանները փորձել են իրենց ազդեցության գոտում պահել Արևելյան Գուգարքն ու Արցախը, փորձելով իրենց իշխանությունը զուգահեռել Աղվանից կաթողիկոսության հետ, իսկ Կիլիկիայում, Կապադովկիայում և Հյուսիսային Ասորիքում հաստատված Անիի և Կարսի թագավորները Գրիգոր Վկայասերի օգնությամբ ջանացել են վերականգնել հայրենիքից հեռացած կաթողիկոսական աթոռի հեղինակությունը, սատարելով Պահլավունիների հոգևոր-եկեղեցական ձգտումներին: Այս գործոններն էլ նպաստել են հետագայում Հայոց թագավորության վերականգնմանը Կիլիկիայում: Եթե Արևելքում իրենց ավատները չկորցրած հայկական նախարարական ընտանիքներն իրենց հույսը կապել էին Վրաց բարձրացող թագավորության առաջնորդ Դավիթ Շինարարի և նրա ժառանգորդների հետ, որը հայկական շրջանակներում ընկալվում էր իբրև «հզոր քրիստոնյա թագավոր», ապա Կիլիկիայում նոր հողեր ձեռք բերած ավատատերերը հաջողության են հասել հենվելով սեփական ռազմական ուժի և քաղաքական հնարամտության վրա: Ընդհանրացնելով իր դիտարկումները, ատենախոսը Բագրատունյաց հասարակության կործանման հիմնական պատճառ է համարում դարերի ընթացքում ավատական հողերի աստիճանական անցումը ֆեոդալական վերնախավին և պետական հողային ֆոնդի աննախադեպ կրճատումը: Այդ իսկ պատճառով աշխատանքի հեղինակը կարևոր է համարում այն փաստը, որ կիլիկյան պետությունը կառուցվել է զինական ուժով ձեռք բերված տարածքի վրա, որով էլ բացատրում է այդ պետության «երկարակեցության» պատճառներից մեկը: Ի հակադրություն դրա, հեղինակն անդրադառնում է Բագրատունյաց թագավորության բյուզանդամետ քաղաքականությանը, և հետևելով սոցիոլոգ Ֆ. Սելզնիկի տեսությանը՝ անվանում է այդ դրսևորումը «խմբառում» (co-optation), նկատի ունենալով այս կամ այն կայսության կողմից հողերի կլանումը և դրանց դիմաց նոր տարածքների հանձնումը: Այս երևույթի սահմաններում է տեսնում հեղինակը նաև Պետրոս Գետադարձի գործունեությունը, ինչպես նաև հայ ավատատերերի Ե դարի պահվածքը, երբ նրանք անցնում էին երբեմն բյուզանդացիների, երբեմն էլ պարսիկների կողմը: Ատենախոսը նկատում է, որ Ժ դարում ուժերի հարաբերակցության խախտումից հետո, միաբևեռ կայսրության հետ փոխհարաբերություններում, ավատատերերը դժվարացան պահպանել իրենց կալվածքները: Միայն Մանազկերտի ճակամարտից հետո հայկական իշխանությունները սկսեցին խաղալ սելջուկների կանոններով, գրավելով Բյուզանդիայի կողմից լքված որոշ տարածքներ, թեպետ՝ ավատատերերից շատերը դեռ հին մտածողությամբ շարունակում էին ծառայել կայսրությանը: Ատենախոսը նկատում է, որ Մատթեոս Ուռհայեցու տարեգրությունը և Ներսես Շնորհալու Վիպասանությունը լի են թյուրքերի դեմ պատերազմներում քաջության մասին պատումներով: Չնայած ոմանք,

Փիլարտոսի նման մահմեդականություն էին ընդունում իրենց տարածքները չկորցնելու նպատակով: Ատենախոսը մատենագրության մեջ առանձնացնում է երեք գաղափարական մոտեցում. որոնցից մեկը զենքի միջոցով իշխանության հասնելն էր, մյուսը՝ մահմեդականությանը համակերպվելն ու իշխանության նկատմամբ status-quo-ի պահպանումը, իսկ երրորդը՝ եկեղեցու միջոցով ավատի կառավարումը, ինչպես եղավ Աղթամարում: Ատենախոսը չի նկատում, որ վերջին մոտեցումն առկա է նաև Հռոմկլայում, քանի որ Հռոմկլան երկար ժամանակ փորձում էր խուսանավել Ռուբինյանների իշխանությունից, որի համար էլ մահմեդական հեղինակները կաթողիկոսներին հաճախ անվանում են Հայոց խալիֆաներ, նրանց համարելով հայկական էկումենեի առաջնորդներ:

Գլխի վերջում հեղինակն անդրադառնում է քաղաքական գաղափարների զարգացման մատենագրական միջավայրին, ցույց է տալիս թե ինչպես է ԺԱ դարի քաղաքական ճգնաժամը դարերից եկող ողբատեսիլային մտածողությունը միաձուլում թագավորության վերականգնման գաղափարի հետ, ստեղծելով քաղաքական մտածողության մի ընդհանուր գիծ: Այստեղ ատենախոսը բնութագրում և իրարից առանձնացնում է «ողբային», «տեսիլային» և «պետության վերականգնման» գաղափարները, գալով այն եզրակացության, որ. «Միջնադարյան Հայաստանի քաղաքական մտածողությունը, ժառանգելով և բյուրեղացնելով Արշակունյաց անկման իրողությունը, սկսել է վերաբերել թագավորությանը ոչ թե որպես քաղաքական համակարգի, որն անդադար ամրապնդման կարիք էր զգում, այլ՝ ավանդական, անգամ ծիսական մի հաստատության՝ լի բաղձանքներով, սակայն զուրկ քաղաքական խորը բովանդակությունից»: Ատենախոսն անդրադառնում է Է դարում ասորական միջավայրում ստեղծված և հայ մատենագրությանն հայտնի Կեղծ Մեթոդիոսի «Յայտնութեանը», այդ տրամադրությունների խորքի վրա քննելով Խորենացու «Ողբ»-ը, Ս. Ներսեսի և Ս. Սահակի «Տեսիլ»-ները: Ատենախոսն այդ գաղափարների ազդեցությունը նկատում է ԺԱ-ԺԳ դարերի պատմագրական երկերում, որոնք, հայկական թագավորության վերականգնումը կապում են Հռոմի կամ այլ օտար ուժերի հետ: Այս հիմքի վրա էլ, ըստ ատենախոսի, ԺԱ դարում գրվում են Մեսրոպ Վայոցձորեցուն, Ներսես Մեծին և Հովհաննես Կոզեռնին վերագրվող տեսիլները, որոնք դառնում են ազատագրական լեգենդի հիմքը: Այդ լեգենդի արձագանքները հասնում են Ներսես Շնորհալու և Գրիգոր Տղայի «Ողբ»-պոեմներին, և Ֆրիկի «Վասն անմիաբանութեան քրիստոնէից»երկին: Ատենախոսն ազատագրական լեգենդի հաջորդ աստիճան է համարում Կեղծ-Եպիփանին վերագրված «Յաղագս Նեռի» պարականոն ճառը, որի ստեղծման մոտավոր ժամանակ է համարում 1125-1174 թթ. և կապում է Գող Վասիլի իշխանապետության հետ (կարծում եմ այստեղ կա ժամանակագրական հակասություն, քանի որ վերջինս իշխել է մինչև ԺԲ դ. 30-ական թթ.), որից էլ էստաֆետն անցել է Ռուբինյաններին: Լեգենդի զարգացման վերջին հանգրվան է դառնում «Դաշանց թուղթը»: Դրան զուգահեռ հեղինակն անդրադառնում է Զաքարյանների քաղաքական դիրքորոշմանն ու ձգտումներին, տալով ժամանակակից պատմագրության հիմնական բնութագրումները, փորձում է վեր հանել վրաց թագավորների քաղաքականության մի

շարք սկզբունքներ, որոնք նպաստել են այդ պետության մեջ հայկական ազգաբնակչության և տիրող վերնախավի դերի բարձրացմանը, ինչպես նաև ի դեմս Մխիթար Գոշի անդրադառնում է այդ պրոցեսի հետ հայ հոգևորականության համախոհությանը: Հեղինակը փաստում է, որ Զաքարյաններն ամրապնդում էին սեփական քաղաքական դերակատարումը Վրաց թագավորության ներսում, իրենց վերագրելով Բագրատունյաց ծագում, թագավորական տիտղոսներ, սակայն որևէ քայլ չեն կատարում թագավորական իշխանությունը վերականգնելու համար: Ըստ հեղինակի քաղաքական պատկերը փոխվում է Թամարի մահից հետո, երբ Վրաց պետությունը ընտրում է Հայոց եկեղեցու նկատմամբ անհանդուրժողականության քաղաքականություն: Կարծում եմ, ատենախոսի այս լուծումն արդարացված չէ, քան որ Թամարի իշխանության տարիներին արդեն նկատելի է Վրաց եկեղեցու անհանդուրժողական դիրքորոշումը:

Աշխատանքի երկրորդ գլխում հեղինակը կատարում է ԺԱ-ԺԳ դդ. առանցքային քաղաքական զաղափարների քննություն, անդրադառնում է թագավորական և իշխանական տոհմերի ծագումնաբանական առասպելներին: Օտար ծագում տալով հայկական ազնվականական ընտանիքներին և գովերգելով նրանց անցյալը, ըստ ատենախոսի, մատենագիրները փորձում են ամրագրել այդ ընտանիքների տեղը Հայոց քաղաքական էլիտայում: Խնդրի հետազոտության մեթոդաբանական կողմը խորացնելու համար կարծում եմ կարելի էր այստեղ դիմել Ա. Լեվիսի (Le sang royal, P. 1986) գրքին, ուր հեղինակը վավերագիր սկզբնաղբյուրների հիմքի վրա ճշտում է կապետինգյան թագավորների տոհմաբանությունը: Ծագումնաբանության խնդիրներն արծարծվում են նաև հոգևոր-կրոնական միջավայրում, այստեղ արժեր անդրադառնալ Պետրոս Գետադարձի և Պահլավունիների հակադրությանը, Աղվանից կաթողիկոսների ժառանգականության խնդիրներին: Հետաքրքիր եզրակացության է հանգում հեղինակը Ստեփանոս Օրբելյանի և Խաչատուր Կեչառեցու աշխատությունների քննությամբ ցույց տալով, որ Սյունիքի եպիսկոպոսը երբեք էլ «զաւառական եկեղեցապետ» (բանաձևն Աշոտ Հովհաննիսյանն է) չի եղել, այլ առաջարկել է Հայոց միացյալ թագավորությունը ստեղծելիս իրար միացնել թագավորական և կաթողիկոսական իշխանությունները: Անդրադառնալով «Իշխանավորի կատարելատիպը և ժամանակի քաղաքական ընկալումը» խնդրին, հեղինակը սկզբնաղբյուրներից քաղելով ի մի է բերել «կատարյալ» իշխանին վերաբերող միջնադարյան պատկերացումները, որոնք արտահայտված են ժամանակակիցների կողմից նրանց տրված բնութագրումներում. «անագահ, պատերազմասէր, աղօթական», «քաջարիք և հզաւրք», «ողորմած», «խաղաղասէր» ևն.: Հիշատակված բնութագրումների մի մասի բացակայությունը, ըստ ատենախոսի, խոսում է իշխանի մասին սկզբնաղբյուրի տածած բացասական վերաբերմունքի մասին: Իշխանավորի կատարելատիպն ըստ հեղինակի քառամասն է. Քաջություն, եկեղեցասիրություն, առաքինություն, բարեգործություն: Իրեն հետաքրքրող դարաշրջանի ձեռագիր հիշատակարաններից և վիմագրերից հեղինակն այնուհետև դուրս է բերում քաղաքացիական իշխանությունը բնորոշող մի շարք եզրաբառ-բանաձևեր. «ի թագաւորութեան», «յիշխանութեան», «ի տէրութեան», «ի պարոնութեան», «ի տիեզերակալութեան», «ի բռնակալութեան», «յանիշխանութեան» և ցույց է տալիս, որ այդ բնութագրումներով են բնորոշվում ժամանակի քաղաքական

միավորները և պետական կարգը: Այնուհետև, հեղինակն անդրադառնում է սկզբնաղբյուրներում հաճախ պատահող Նախախնամության գաղափարին, որն ազատագրական «լեգենդի» կարևորագույն մոտիվներից է: Աշխատության վերջում հետազոտության առարկա է դառնում նախնական ազատության գաղափարը, հիմնված Սարգիս Շնորհալու, Մխիթար Գոշի, Վարդան Այգեկցու և այլոց վկայությունների վրա: Դրանով իսկ հեղինակը ցույց է տալիս, որ դրանք ոչ թե վաղ Վերածննդի արտահայտություններ են, այլ Աստվածաշնչի մեկնության փորձեր:

Եզրակացություններում հեղինակն ընդգծում է, որ Բագրատունյաց թագավորության ճգնաժամի և անկման գործում հիմնական դեր կատարել է պետական կառուցվածքի անկատարությունը, հողային ֆոնդի փոխանցումը Բյուզանդիային, պետության պահպանման նկատմամբ քաղաքական էլիտայի երկփեղկվածությունը: Դրան հակառակ, ԺԲ-ԺԳ դարերում բարձրացող պետական միավորների ձևավորման համար կարևոր դեր են խաղացել նոր հողերի յուրացումը և եկեղեցու քաղաքական իշխանության օրինականացումը: Ատենախոսը պետականության վերականգնման գործում, հետևելով Աշոտ Հովհաննիսյանի մոտեցմանը, կարևոր դեր է հատկացնում «հայ ազատագրական լեգենդի» խմբագրություններին և այդ բնագրերի խաղացած դերին:

Աշխատանքում քննված և այստեղ թվարկված խնդիրներից շատերը թարմ շունչ են հաղորդում հայագիտական հետազոտություններին և պարտավորեցնում հեղինակին ժամանակի ընթացքում ավելի խորացնել դրանք և կուռ եզրակացություններով ամրապնդել ասելիքը: Գովելի է հեղինակի ձգտումը՝ հարստացնել հայագիտական բառապաշարը նոր ստեղծված եզրերով: Այնուամենայնիվ կուզեի հեղինակի ուշադրությունը հրավիրել այն փաստի վրա, որ «Քյոթուկ» և «τυπικόν» տերմինները նույն նշանակությունը չունեն և պետք էր հայերեն թարգմանել տարբերվող եզրերով:

Կուզենայի հեղինակի ուշադրությունը սևեռել աշխատության մի շարք հատվածների վրա.

Ատենախոսը երբեմն չափազանց կտրուկ է իր եզրակացություններում. օրինակ ծանոթագրություններից մեկում գրում է. «Ինչպես հայտնի է ո՛չ Արշակունյաց, ո՛չ էլ Բագրատունյաց շրջանում չի եղել ո՛չ ինքնուրույն, ո՛չ էլ թարգմանական աշխարհիկ իրավունք»: (էջ 18, ծ. 76): Պարզապես պետք էր գրել, որ մեզ չեն հասել նման սկզբնաղբյուրներ:

Ատենախոսը ճիշտ չի հասկացել Մատթեոս Ուռհայեցու բնագիրը և համարում է Վասիլ Տղային՝ Գող Վասլի որդի: Այնինչ՝ Տղա Վասլին մի քանի անգամ հիշատակող Մատթեոս Ուռհայեցին նման բան չի ասում. «Եւ տան զիշխանութիւն [Գող. - Ա. Բ] Վասլին՝ Տղայ Վասլին, որ էր մայրենեօք յազգէ Կամսարական, **սնեալ և զարգացեալ ի տուն Վասլին՝ որպէս զորդի ի ծոցս հօր իւրոյ**. . . »(էջ 324): Մատթեոսի բնագրի մի այլ հատվածում ևս պատմիչը հիշատակում է Տղա Վասլին Գող Վասլի զորքի մեջ, գրելով. «. . . իշխանն Հայոց Գող Վասիլն զգալ այլազգեացն, հասանէր զօրօք իւրովք . . . և Վասիլ **ոմն Տղայ անուն մայրենեօք յազատ ազգէ**. . . »(էջ 307): Այս հատվածներից կարելի է եզրակացնել միայն, որ Տղա Վասիլը մեծացել է Գող Վասիլի հովանավորության ներ-

քո (փաստն արձանագրված է Ժ. Դեդեյանի մենագրությունում): Կարելի է միայն են-թադրել, որ Վասիլ Տղան եղել է Գող Վասլի որդեգիրը, ինչպես ժամանակին առաջին խաչակրության մասնակից Պաղտին իշխանն էր դարձել Եդեսիայի տեր Թորոսի որդե-գիրը:

Իշխանական դասին անդրադառնալիս, ինչպես նաև իշխանավորի կատարելա-տիպը քննելիս կարծում եմ պետք էր անդրադառնալ Ներսես Շնորհալու Թուղթ Ընդ-հանրականում կաթողիկոսի բարոյական խրատներին, որոնք ուղղված են ԺԲ դարի կաթողիկոսի պատկերացմամբ հայ հասարակության բոլոր խավերին:

Կարծում եմ թյուրիմացություն կա, երբ հեղինակը գրում է. «Տայոց մեկ այլ իշխան Վասիլ Ապուկապը, արդեն ինքնավարություն էր ստեղծում Կիլիկիայում...» (էջ 56-57): Բյուզանդական այս զորահրամանատարը որևէ ներդրում չունի Կիլիկիայում ինքնա-վարության ստեղծման գործում, նրա գործունեությանը իբրև Եդեսիայի բյուզանդական դուքս, մանրամասնորեն անդրադառնում է պատմաբան Ժերար Դեդեյանը:

Այս և նման այլ կարգի լրացումները և սրբագրությունները կարծում եմ նկատի կառնվեն, երբ աշխատանքը պատրաստվի հրատարակության:

Ներկայացված աշխատանքը գրված է հիմնական սկզբնաղբյուրների և գիտական գրականության հաշվառմամբ և բարեխղճությամբ, հղկված հայերենով և անկասկած նորույթ է հայագիտության բնագավառում: Սեղմագիրը լիովին համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը: Այդ իսկ պատճառով միջնորդում եմ ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի Է. 00. 01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ գիտ-խորհրդի առջև, Արեգ Արմանի Վարդանյանին շնորհելու պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի
«Արևելյան աղբյուրագիտության և պատմագրության»
բաժնի վարիչ, պ. գ. դ. Ազատ Բոզոյան

Հաստատում եմ
Ն. Հարությունյան, ՀՀ ԳԱԱ
Արևելագիտության ինստիտուտի
գիտքարտուղար
16.06.25թ.

Институт востоковедения Национальной академии наук РА ГНКО
Institute of Oriental Studies of National Academy of Sciences of the RA SNCO
00009554